ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 04 >> Հոկտեմբեր 2013թ. N 130

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ <<ԱՐՄԱՎԻՐ-ԲԱԳԱՐԱՆ>> ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տրանսպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N762 որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռներեց Հակոբ Բաղդասարյանի 2013 թվականի փետրվարի 28-ի դիմումը.

որոշում եմ՝

1. 2013 թվականի մարտի 1-ից դադարեցնել անհատ ձեռներեց Հակոբ Բաղդասարյանի <<Արմավիր-Բագարան>> միկրոավտոբուսային երթուղու սպասարկման իրավունքը:
2. 2013 թվականի մարտի 1-ից դադարեցնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 20 ապրիլի 2009թվականի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ներմարզային ավտոբուսային /միկրոավտոբուսային/ երթուղիները մրցույթի արդյունքներով կազմակերպությունների սպասարկմանը հատկացնելու մասին>> N 132 որոշման 3-րդ կետի գործողությունը:
3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում կազմակերպել ներմարզային <<Արմավիր-Բագարան>> միկրոավտոբուսային երթուղու մրցույթ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***